**Գերմանիայի Բունդեսթագի «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրով հետաքրքրված անձանց**

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես Գերմանիայի Բունդեսթագը, համագործակցելով Բեռլինի Ազատ համալսարանի, Հումբոլդտի համալսարանի և Տեխնիկական համալսարանի հետ, առաջարկում է երիտասարդ, քաղաքականությամբ հետաքրքրվող, բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներին Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ Բեռլինում:

Ծրագիրը տևում է 2021թ. մարտի 1-ից մինչև հուլիսի 31-ը:
**Հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2020թ.  հուլիսի 31-ն է:**

Գերմանիայի Բունդեսթագի www.bundestag.de/ips համացանցային էջում զետեղված են ծրագրի վերաբերյալ կարևոր տեղեկություններ, այդ թվում մասնակցության նախադրյալներն ու մրցութային փաստաթղթերի ցանկը, գերմաներենի գիտելիքները հաստատող լրացման թերթիկը, ինչպես նաև մրցույթին վերաբերող հարցաթերթիկը: Դեսպանության www.eriwan.diplo.de կայքում տեղադրված է համապատասխան հղում:

Ես Ձեզ շնորհակալ կլինեի, եթե Դուք իրազեկեիք ծրագրի մասին բոլոր հնարավոր հավակնորդներին և Ձեր կայքում տեղադրեիք հղում՝ Գերմանիայի Բունդեսթագի «Միջազգային խորհրդարանական կրթաթոշակ» ծրագրին:

Լրացուցիչ հարցերի դեպքում հետաքրքրված անձինք կարող են դիմել դեսպանություն:

Բարեկամական ողջույններով՝

Ֆոլքեր Էբել